

որ հնազանդական ժողովը անպատճառ լինելու է այս տարվայ սեպտեմբեր ամսին:

Պ. Ա. Թուրքիայի հասարակական կյանքը հայաստանի մասին, որ պետք է լինել չարախ օր, մայիսի 23-ին, յետաձգվեցաւ մի ուրիշ օրվայ: Մենք կը յայտնենք մեր ընթերցողներին թէ երբ կը լինի այդ հասարակական ժողովը:

Արժանաւատ աղբիւրից մեզ հաղորդում են, որ անցեալ տարի Անդրկովկասեան երկաթուղու նաւթային բաժնի (Բաբու—Բալախանի) երկնակութիւնը պատճառեց նրա ընկերութեանը 35 հազար բուրլ ֆուս ցայտնի է, որ այս ճանապարհների եկամուտը ապահոված է տէրութեան կողմից և այս ֆուսը իր ծանրութեամբ ընկնում է նրա գանձարանի վրա: Այս հանգամանքը միայն մտքի առաջ ունենալով, շատ ժամանակ չէ որ տեղային երկաթուղու կառավարչական վերահսկողութիւնը ներկայացրել էր ճանապարհային հաղորդակցութեան նախարարութեանը այն նախագիծը թէ ապագայում այդ ֆուսներին վերջ դնելու համար անհրաժեշտ է նախ քան բարձրացնել բեռնակրութեան գինը մինչև 1/10 կօպ. պօղ զի երս տից, առանց մի որ և իցէ բեռների տարբերութեան: Երկրորդ թույլ տալ ընկերութեանը առնել 1/8 կօպ. ամեն մէկ պուղից բեռնակրելու և դատարկելու համար բացի նախից, որը կարող են և իրանք, ուղարկողները, բեռնել ու դատարկել: Իսկ երբ ուղարկողները այս անկողաց բանացնեն ընկերութեան կարասիքը, պիտի վճարեն ամեն մէկ պուղից ըստ համաձայնութեան—մինչև 1/8 կօպ. և ոչ աւելի: Արեւմտեան երկաթուղու ընկերութեան գինը պիտի բարձրանա 1/45 մինչև 1/10 կօպ. Նախարարութիւնը, որպէս և հարկաւոր էր սպասելու, այս առաջարկութիւնը մերժեց, որովհետեւ այդքան բարձր տարիքը (1/10 կօպ.) նախի համար չէր կարող վատ ազդեցութիւն չունենալ նրա վաճառահանութեան վրա: Ան ծովի եզերքում և կարող էր տակաւին խանգարել մեր, այս տարի սկզբնաւորած, յարակցութիւնները: Գերմանիայի հետ, որը, իր մէջ նախի գործարաններ կառուցանելու համար, քանի միլիոն պուղ յանձնարարութիւններ է արել Անդրկովկասում նախի վերաբերմամբ: Բացի այդ ամենը նախը, որպէս նոր ճիւղ մեր վաճառահանութեան, պահանջում է ամեն տեսակ խրախուսանք և դիւրութիւն:

Մեզ գրում են Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ Աղափրեան Գրիգոր սրբազան եպիսկոպոսի այստեղ գալու պատճառը ոմանք մեկնում են՝ որպէս թէ Լեւոնի մեծարանի և Թիֆլիսի Ներսիսեան դպրոցի համար վարժապետներ է որոնելու, իսկ ոմանք ասում են թէ՝ սրբազանը յանձնարարութիւն ունի Լեւոնի կողմից հայի տեսնելու յայտնի հայ վախճառուի հետ և սրա ձեռքից Լեւոնի փողերն ազատելու... Լա է

տեմ. երբ սուպ պատուիրեմ չբէլ մուխիս աւում եմ, որ եթէ չեմ սխալվում, նշանակում է առանց ճանճի. որովհետեւ Թիֆլիսի ճաշարաններում սուպը ձմեռը մտով, իսկ ամառը ճանճիով են պատրաստում, շատ կարելի է տեսնաղիտութեան մի նոր եղանակ է. Թիֆլիսում ապրուստը թանգ լինելուն պատճառաւ ծանր ծախքերի դէմ դնելու համար տնտեսաղիտութեամբ հաւասարակշռութիւնը պահպանում են, օրինակ, բենեֆիտ ունեցող դերասանին փոխանակ եւրոպական մուգիկայով ընդունելութիւն անելու մի նոր խնայողական միջոց են գտել, այն է— դափուլ, դուռնա, դիմալիպտոս:

Անցեալ օր, դէս ու գէն գնամ, ման գամ, մի նոր նիւթ ճարմած ասացի (ես չեմ ուրիշ դարդ չունեմ): Միխայէլեան կամօյի միւս կողմը անցկացայ, և սկսայ բոլորովին անծանօթ փողոցներում պատահմամբ պտոյտներ անել. չը գիտեմ ինչպէս պատահեց, տեսայ որ գետի եզերքն եմ հասել, այնտեղ այնպիսի մի նիւթ գտայ որ քիչ մնաց, լրացրայ խառն լուրերի կարգը ես ինքս նիւթ պիտի դառնայի հետեւալ տողերով: «Այս առաւօտ կուր գետի ափում ձկնորսները մի մարդու գիակ գտան, որ չները խաճինով սպանել էին, սպանվածի գրպանից դուրս հանված թղթերից խնայվեց որ «Մշակ» լրագրի ֆելիետոն գրող Վլադիմիր Երեմյանը: Ոստիկանութիւնը չների հետքը գտնելու համար ազգու միջոցներ ի գործ դրած է»:

ուշ քան թէ երբեք.—մնում է մեզ աւելացնելու:

ԱՐՏԱԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՌՍՏՐՈ-ՈՒՆԳԱՐԻԱ

Լիօվից «Presse» լրագրին հաղորդում են մայիսի 8-ից, որ այդտեղ պոլիցիան կառավարեց մի արուեստաւորին, որ կայնում էր պատերի վրա յիշատիւնական պրօկլամացիաներ:

«Չաս» լրագրը իր մայիսի 8-ի առաջնորդող յօդուածում յանդիմանում է ռուս ժողովուրդը իր վարմունքի պատճառով հրէաների դէմ, որոնց դէմ յարուցված հալածանքը հարաւից հետահետա տարածվում է դէպի հիւսիս և աւելի սպառնալի է դառնում: Լրագիրը մատնացոյց է անում այն բարեկամական յարաբերութիւնների վրա, որոնք կան ինչհայեցիկ և հրէաների մէջ և զարմացած հարցնում է ի՞նչի տան և ինչերորդ դարի եւրօպան, ի՞նչի «չը» բէական համաշխարհային միութիւնը՝ սառնասիրտ կերպով նայում են հրէաների հալածման վրա Ռուսաստանում, այն ինչ, մի քանի տարի առաջ Ռուսիայի հրէաների դրութիւնը դարձել էր ընդհանուր եւրօպական խնդիր:

ՖՐԱՆՍԻԱ

Մարտի մէջ կատարված յայտնի ցոյցի առիթով ռուսաց հիւպատոսի դէմ, Բարտիւնի Սենտ-Լիւր յայտնեց ռուսաց դեսպան իշխան Օրլովին, որ Ռուսաստանը կատարելալ բաւականութիւն կը ստանայ նրան հասցրած վիրաւորանքի համար: Գատաւտանական հալածանքը այդ ցոյցի առաջնորդներին դէմ, որոնց թուում է և Պաուլա Միսկ, սկսվեցաւ աւելի շուտ, քան ի՞նչ ռուսաց դեսպանը գանգատվեց Ֆրանսիական կառավարութեանը: Ցանցաւորները մեղադրում են անկարգութիւն գործելու և ռուսաց կայսրին վիրաւորելու մէջ:

Ֆրանսիական միւնիստր-տեղապահ Ռուստան յայտնեց Տունիսի բէյին, որ մի քանի անուանի տեղացիներ, անբաւական լինելով Ֆրանսիայի հետ կապված դաշնագրութե-

կս մեռնելուց յետոյ ոստիկանութիւնը չներին գտել չէ գտել, ամենքը մէկ հաշիւ է, արդէն ոստիկանութիւնը երկու ոտքով չներին չէ կարողանում բռնել, չորս ոտքով չներին միթէ կարելի է ձերբակալել:

Տեսէք, նիւթ գտնելու համար քիչ մնաց չըներին զո՞ գնացի, մի հրաշքով կարողացայ ազատվել, կատաղաբար վրաս յարձակվեցան, օգիտէ թիւքս ֆելիետոնիստ լինել ճանաչելին, ինչ և իցէ մէկ էլ այն կողմերը չեմ գնայ:

Այսպէս է, չը կայ երկրագնդի վրա մի զբաղմունք (բացի վանքի միաբանութիւնից) որ աշխարհային վտանգներից մարդ պատ լինի, դրա համար մարդ պէտք է իր կեանքը ապահովացնէ, որպէս զի ինքը մեռնելուց յետոյ, մնացողները գոնէ մի բան ստանան, կամ եթէ ինքը միշտ որչեպէս ժամանակը կենդանի մնայ, խոստացեալ գումարը ինքը ստանայ: Բայց Թիֆլիսի համար դրա մէջ էլ մի մեծ արգելք կայ. կենաց ապահովութեան կանտօրի առաջին պայմանն է որ կեանքը ապահովցրած անձը Թիֆլիսից փութի տանող երկաթուղով ճանապարհորդելու իրաւունք չը պիտի ունենայ:

Կ. Պետրուս անիւրաւութիւնները բազմապատկվում են, Թիւրքերը սկսել են իրանց նախապաշարեալ զգուշութիւնները աւելի եռանդով սաստկացնել հայերի վերաբերմամբ: Բանաստրկում են առանց խտրութեան, խմբադիր, պատմագիր, տպագրիչ, գրաւար, հայկաբան, գրաւաճառ, աղ-

նից, մտադիր են այժմեան բէյին դահնկէց անել և նրա տեղ ընտրել մէկ ուրիշ: Բուստան պահանջեց կալանաւորել դաւադիրներին և քննութիւն նշանակել:

Ֆրանսիայի և Վենեցուէլայի հանրապետութեան մէջ անբաւականութիւն պատահեց, որովհետեւ երկրորդը չէ վճարում Ֆրանսիային այն 305,000 դոլար, որ նա պարտ է Ֆրանսիային դեռ կայսրութեան ժամանակից: Այդ հարցի պատճառով ծագած անբաւականութիւնները առիթ տուին Ֆրանսիական դեսպանին ընդհատել դիպլոմատիական յարաբերութիւնները Վենեցուէլայի կառավարութեան հետ և Ֆրանսիա ուղեորվել:

Գամբետայի փայլուն յաղթութիւնը լրագիրների քննութեան նախադուշակութիւնների և ենթադրութիւնների առարկայ է դարձել: «Republique Française» լրագիրը յայտնում է, որ պատգամաւորների ժողովի վճիռը յետոյ Ֆրանսիայի համար նոր դարաշրջան է սկսվում: Բոլոր անհամաձայնութիւնները կը մոռացվեն և ապագայ ընտրութիւնների ժամանակ կանգիդատներ լից կը պահանջվի յայտնել իրանց կարծիքները այն ընդարձակ սօցիալական վերանորոգութիւնների մասին, որոնց պէտք է իրագործէ պատգամաւորների ապագայ ժողովը: Բոլոր կուսակցութիւնների լրագիրները խօսում են Գամբետայի գործութեան և կոչման մասին: Ընտրողական հարցի քննութեան օրը պատգամաւորների ժողովը կսկսվում էր քուէարկութեան հետեւեքը: Նիսից մի օր առաջ բոլոր պատգամաւորներին ուղարկվեցաւ Գրեվիի «La Paix» լրագրի այն համարը, որտեղ նկարագրված էին Բարդուի և Գամբետայի նախագծից առաջնալի փոփոխութիւնը: Հասարակութիւնը լցրել էր իր համար պատրաստված տեղերը, դիպլոմատիական լոժաների մէջ գտնվում էին բոլոր պետութիւնների ներկայացուցիչները: Հարկից աւելի սենատորներ սպասում էին Գամբետայի ճառին: Միւնիստր Ժիւլ Ֆերրիի զեկուցումը Տունիսի հետ դաշնագրութիւն կապելու մասին աննկատելի անցաւ: Ընդհանուր ուղարկութիւնը աւելի էլ լարվեցաւ, երբ Գամբետայա բարձրացաւ ամբիօնի վրա: Ժողովի մէջ տիրեց լուռութիւն: Գամբետայի ճառը տեղ տեղ շատ լաւ էր, բայց նա յաջորդաբար չէր խօսում, որովհետեւ նրան

գային երաժիշտ, բանաստեղծ և այլն. այս ընթացքով մի օր ամբողջ հայերին պէտք է բանտարկեն, բայց այդքան հայ բովանդակելու չափ մեծ բանտ չը կայ. ես խորհուրդ կը տայի Օսմանեան կառավարութեան որ բոլոր հայերին Հայաստան աքսորել: Երաւարտիկ յարմար և լայնածաւալ մի բանտ, հայկական հարցն էլ ինքն ըստ ինքեան լուծված կը լինէր: Թիւրքին նպատակն է հայերին ոչնչացնել, բայց ողորմելին չատ է սխալվում, նա կարծում է թէ հայերը սուլմա են, որ առանց ծամելու կարելի է կուլ տալ: Իսկո՞ք չէ խանութ թէ հայը անցեալին մէջ ինչ խորագէտ և ճշոր տէրութեանց ճշնունների տակ չէ անհետացել: Միթէ ի կորուստ դատապարտված թիւրքի ծագելի կամակորութեամբ պիտի փնտնայ հայը: Այնու ամենայնիւ Պետրուս հայերի վախը կօմքական է դարձել, ինչպէս երեւում է երկու հայի մէջ տեղի ունեցած հետեւալ խօսակցութիւնից:

— Բարի լոյս, պարոն Ամիրկոնեան,
— Սուս կանց եղբայր, կամաց ասա, զուլաս փորձանքի կը դնես:
— Ի՞նչ կայ եղբայր, ինչ ասացի:
— Ես Ամիրկոնեան չեմ, անունս փոխեցի, հիմայ անունս Գուլազեկեան է:
— Ի՞նչ է պատճառը:
— Վախենում եմ որ ինձ չը բանտարկեն, վարդան Մամիկոնեանի տղան կարծելով:
— Լսում եմ որ վերջապէս Անգլիան զթալով

անդադար ընդհատում էին և նա ստիպված էր սրամիտ պատասխաններ տալ, որոնք ոգևորութեամբ էին ընդունվում: Նրա ճառից յետոյ պատգամաւորները դարձեալ կասկածում էին քուէարկութեան հետեւանքները և անհամբերութեամբ սպասում էին նրա սկսվելուն: Երբ յայտնվեցաւ Գամբետայի յաղթութիւնը, ամենքը նրան շնորհակցելին և սկսեցին շնորհաւորել: Պատգամաւորների ժողովի վճիռը երեւի կը հաստատվի սենատից: Միւնիստրները չը մանակցեցին քուէարկութեանը: Վիւլ Ֆերրի և Նահապետ Գրեվիի զգուշում են, որ իրանք յաղթված են:

ՆԱՄԱԿ ՖՐԱՆՍԻԱՅԻՑ

Փարիզ, 18 մայիս

Նատ ժամանակ չը կայ որ Ֆրանսիան սկսեց իր պատերազմական գործողութիւնը վայրենի խրուժիւրների դէմ և այսքան ժամանակամիջոցում դեռ աջող կերպով է յառաջ տանում իր դործը: Այստեղի լրագիրների ասածներին նայելով պէտք է շուտով վերջանայ վայրենիների կատարեալ յաղթութիւնը, բայց եղանակների վատ լինելու պատճառով մի քիչ երկար կը տեւէ: Հեռագիրներից տեղեկանում ենք, որ Ֆրանսիական զօրքը արդէն հինգ կիլոմետր հեռու է դառնում Թունիսից: Կեռ ես մի վճռողական պատերազմ տեղի չէ ունեցել, որի համար բաւական են համարում միայն տասն ու հինգ հազար զինուոր: Խրուժիւրները մինչև այժմ, ընդհանրապէս, միշտ տեղի են տուել Ֆրանսիական զօրքերին անշնան դիմադրութեամբ և կենտրոնանում են մի բաւականին դժուարմատելի լեռան վրա, ուր թաղված է իրենց նշանաւոր սուրբը:

«Le Rappel»-ը Բապպէլ—լրագրի խմբագիրը իր առաջնորդող յօդուածում յայտնում է այն կարծիքը, թէ Ֆրանսիան պիտի շտապէ պատերազմը շուտով վերջացնել, որպէս զի սրանից էլ մի նոր կոնգուստ հարց չը ծագէ եւրօպական տէրութիւնների մէջ. որովհետեւ, ասում է պարոնը, Ալժիրից մի և Թունիսից մի սրբազան պատերազմ են քարոզում մահմետական հոգեւորականները և հաւատացեալները այս քարոզներով ոգեւորված սպառնում են կոտորել բոլոր եւրօպական գաղթականութիւնները: Եթէ այսպէս պատահի, աւելացնում է պարոնը, որը շատ ցաւալի հետեւանքներ կուենայ, այն ժամանակ բոլոր տէրութիւնները ստիպված պէտք է պատերազմական նաւատորմ ուղարկեն աֆրիկական ափերը չարագործներին պատմելու: հետեւաբար պիտի ծագէ մի նոր կոնգուստ և կշքած հարց, որը լաւ ապագայ չէ խոստանում ընդ-

Հայաստանի վիճակի վրա, ուզում է այդ հարցին վերջնական կերպով մի որոշում տալ իր ազգեցիկութիւնը ի գործ դնելով: Տար Աստուած, որ ստատանան փորը չը մանէր, և այս անգամ էլ Հայաստանին Աֆղանիստան չաւեր, ինչպէս անցեալ տարի Ֆիւրդիստան ասած էր. բայց վախենալու բան չը կայ, թէ կուզէ Պետրուս տան ասէ, Աստուած կեանք տայ Կ. Պետրուսի և ինքնօրինական ժողովին, նա իսկույն մի բողոք կանէ, այն ժամանակ Անգլիան բանից պըրժած է:

Խեղճ Հայաստան, ոչ ոք վրան չը խցար, ամեն չարեաց դարման կը գտնեն, օրինակ խաղողը ֆիւթօքէրա ունի, սրա դեղը գտնված է. ցորենը մորեկ ունի, սրան էլ ճարը մտածել. ցորենը հայը քիւրդ ունի, սրան ինչու մի հնար չեն մտածեր, կարծես թէ հայը խաղողի և ցորենի չափ արժէք չունենար: Որքան լաւ կը լինէր եթէ լուս ծաղիկի փոշին նման մի գեղգանէին և Հայաստանի փիւրղաբանակ գծերի վրայ փոշից ցանէին քրդերին ջնջելու համար: Արդարեւ մի փոշի կայ, որի գոյնը լուս ծաղիկի նման դեղին չէ, այլ սև է, գծախառնաբայ այդ սև փոշին հոտը Օսմանեան կառավարութեան քթին անախորժ թուելուն համար մօտերում արգելեց, բայց...

Կըռօ